Ակադեմիայի 50-ամյակի առթիվ

Ինչպես արդեն հաղորդվել է, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունները կանցկացվեն մայիսի 23-25-ը: Հոբելյանական հանձնաժողովի անդամ, ակադեմիայի, ղեկավարության ընդհանուր հարցերի գծով տեղակալ Լավրենտի Բարսեղյանը Արմենպրեսի թղթակցին հայտնեց, որ արդեն կազմվել եւ հանձնաժողովի հաստատմանն է ներկայացվել միջոցառումների անցկացման ծրագիրը: Նախատեսվում է հրավիրել երկօրյա գիտական նստաշրջան, որը մայիսի 23-ին կբացվի ակադեմիայի դահլիճում: Հաջորդ օրը նիստերը կշարունակվեն ակադեմիայի գիտական բաժանմունքներում: Մայիսի 25-ին ազգային օպերայի եւ բալետի թատրոնի դահլիճում կկայանա հոբելյանական հանդիսավոր նիստ:

Նույն օրը հյուրերին եւ մնվանի հայ գիտնականներին կընդունի ՀՀ նախագահը:

Միջոցառումներին իրենց մասնակցությունը կբերեն ակադեմիայի արտասահմանյան անդամներ, հյուրեր ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Պորտուգալիայից եւ Ճապոնիայից: Պատվիրակություններ կլինեն նաեւ ԱՊՀ եւ մերձբալթյան երկրներից:

Ի կատարումն հոբելյանի անցկացման վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրի, նախատեսվում է հանրապետության քաղաքներում եւ մյուս բնակավայրերում նշանավոր հայ գիտնականների անուններով կոչել դպրոցներ, փողոցներ, հուշատախտակներ փակցնել նրանց ապրած տներին: Կստեղծվեն ականավոր գիտնականների անվան մրցանակներ, որոնք կշնորհվեն գիտությանը մատուցած ծառայությունների եւ ձեռք բերած գիտական նվաճումների համար:

Հոբելյանի կապակցությամբ ստեղծվել է նաեւ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հանձնաժողով՝ ակադեմիայի ղեկավարության Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ:

ՄԱՐԳԻՍ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Արմենպրեսի թղթակից